

«ԲԱՌԳԻՐՔ ՆԱՅՈՑ»

Երևմիա Մեղրեցուն վերագրված «Բառգիրք Նայոց» աշխատությունը պալագրությունից հետո անմիջապես հայտնվել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Բառարանը լի էր տարբերություններով, հնչյունական և ուղղագրական տարբերակներով, որի պատճառով գերծ չմնաց դիտողություններից: Բնականաբար հին բառարանները (այդ թվում և «Բառգիրք Նայոց»-ի հիմքում ընկած «Բառք քերթողականը» բառարանը) դեռևս հստակ չէին առանձնացնում ժողովրդախոսակցական-բարբառային շերտերը, որի հետևանքով բառարանում կարելի է հանդիպել միևնույն բառի հնչյունական տարբեր ձևեր, կամ պարզապես բարբառային տարբերակներ: Օրինակ՝ «Ախառեղագէս» բառը ԲՆ-ում բացատրված է «սնագլուխ»: Այս բառը անհասկանալի է թվում, սակայն նույն բառի մասին տեղեկություն ենք ստանում ՆՏԲ-ից, որտեղ այն տրված է «Ախառեղագէս» տարբերակով և համապատասխան բացատրությամբ: Այսպես փաստորեն գործ ունենք խ>հ անցման հետ, ինչը բնորոշ է հայերենի մի շարք բարբառներին: Այսինքն՝ մատենագրությունից բացի, «Բառգիրք Նայոց»-ի համար աղբյուր են ծառայել նաև ժողովրդական բարբառները, որոնցում կենդանի խոսակցական լեզվի ու բարբառային բառերի թիվն անհամեմատ մեծ է:

«Բառգիրք Նայոց»-ի և «Բառք քերթողականը»-ի բառամթերքի և կառուցվածքային համեմատություն է անում Ռ. Ղազարյանը: Մարմանշերով ակնհայտ նմանությունները՝ լեզվաբանը հետևյալ եզրակացությունն է անում. «...Դժվար չէ, անշուշտ, հետևել, որ Ե. Մեղրեցին նոր բառարան չի կազմել, այլ անմիջականորեն, գրեթե առանց փոփոխությունների, «Բառգիրք հայոց» վերտառությամբ պալագրության է ներկայացրել ձեռքի տակ եղած «Բառք քերթողականը» բառարանի գրչագրերից մեկը՝ ընդօրինակված ոչ վաղ, քան 17-րդ դարում»¹:

«Բառք քերթողականը»-ն իր հերթին օգտվել է տարբեր աղբյուրներից: Այդ մասին է վկայում բառարանի սկզբում եղած տեղեկությունը. «Այս բառք են **քերթողականը** վասն չափոյ Նոմերական տառիցն, վասն զի քերթողական արեւեստրն չափաբերականը են և չափով վարին, և են որ **գեղջուկը** են, որով ճարտասանքն վարին, զի յաճախապէս փոխաբերին սակս զարդոյ ճարտասանիցն, և հարկ է հոգնահամար եղանի: Իսկ թէ **յունաց բառն** խնդրես, որ սկիզբն էր եղեալ, այն եւս խառնեալ է յայս, նաեւ զբանս Աստուածաշնչին, որ յերոյ հաւաքեցաւ»:

Ն. Ամալյանը բնական բնագիրը կազմելիս բառարանային բուն նյութին անցնելուց առաջ դրել է հենց «Բառք քերթողականը»-ի վերոնշյալ տեղեկությունը²: Սակայն «Բառգիրք Նայոց»-ն ունի այլ վերնագիր³: Այսպիսով՝ եթե փորձենք պարզել ԲՆ-ի աղբ-

1 Ռ. Ղազարյան, Էջեր հայ բառարանագրության պատմությունից, Երևան, 2002, էջ 25:

2 «Բառգիրք հայոց», Աշխար. Ն. Ամալյանի, Երևան, 1975, էջ 3:

3 Երևմիա վարդապետ, Բառգիրք հայոց, յԱլիկօնայ, 1698, էջ 1:

յուրները, պետք է հիմք ընդունենք նախ «Բառք քերթողականը»-ի և ապա ԲՆ-ի սկզբում եղած տեղեկությունները: Այստեղից կարող ենք պարզել նաև, թե բառային ինչ շերտեր են առկա տպագրված բառարանում: Դրանք գրական-բանաստեղծական («քերթողական վասն չափոյ Նոմերական տառիցն...»), ժողովրդական-բարբառային («որ գեղջուկք են, որով ճարտասանքն վարին...»), հունարեն բառեր («Իսկ թե՛ գյուղաց բառն խնդրես..., այն ևս խառնեալ է յայս»), աստվածաշնչյան բառեր («նաև գրառս Աստուածաշնչին») և Սարգիս եպիսկոպոսի ավելացրած դարձյալ աստվածաշնչյան բառեր («գրառս Աստուածաշունչ գրոցն ընդ սմա միատրեալ»):

«Բառգիրք Նայոց»-ի առաջին հրատարակությունից մոտ կես դար անց՝ 1749 թվականին, լույս է տեսնում Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզվի» աշխատության առաջին հատորը (երկրորդը՝ 1769): Բառարանը համարվում է հայերեն առաջին ընդարձակ, բնագրային բացատրական բառարանը: Բառարանի առաջաբանում խոսվում է նաև «Բառգիրք Նայոց»-ի վերաբերյալ՝ որպես բառերով աղքատ, սխալներով լի մի գործ, որի բացատրությունները հաճախ առավել բարդ են, քան բացատրվող բառը՝ գլխաբար: Ահա թե ինչպես է արտահայտվում Մխիթար Սեբաստացին. «Նախ զի անչափ աղքատ է բառիք, մինչև հազի ոք կարել գրանել զմին ի հարկի բառիցն, գորս որոնել: Երկրորդ՝ յաղագս խթնությունն մեկնությունն, զի ի բազում տեղիս մեկնող բառքն առանել խթնին են, քան զմեկնելիս... Եւ երրորդ՝ վասն անհամար սխալանաց սպրդելոց»⁴:

Որքան էլ Սեբաստացու և իր աշակերտների կարծիքով ԲՆ-ն թերաշար է, այնուամենայնիվ, իրենց բառարանը կազմելիս վերջիններս օգտվել են ԲՆ-ից: Այս դեպքում ԲՆ-ն որպես աղբյուր ծառայել է ավելի մեծ բառարանի կազմության համար, թեև այդ մասին հստակորեն չի նշված ՆԲ-ի առաջաբանում: Իսկ նույնաբնույթ բառարանների պարագայում նախորդ նյութի հետ հաշվի նստելը յուրաքանչյուր բառարանի հաջողության գրավականներից մեկն է:

1836 թվականին լույս է տեսնում Մխիթարյան հայրերի հերթական գլուխգործոցը՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» վերնագրով: Այս բառարանը պարունակում է շուրջ 50000 բառ, որի հիմնական աղբյուրը հայ մարենագրությունն է, այսինքն՝ այստեղ հավաքված է գրաբարի ըստ կարելվույն ողջ բառամթերքը: Բառարանի յուրաքանչյուր բառահոդված ունի համապատասխան գործածության օրինակ այս կամ այն երկից: Այսինքն՝ բառարանի հեղինակները կարևորում էին բնագրային վկայությունները: ՆԲ-ում նույնպես կան այնպիսի բառահոդվածներ, որոնք չունեն համապատասխան բնագրային վկայություններ, որով, իրենց իսկ ընտրած սկզբունքի համաձայն, բացատրության կողմը դառնում է թերի: «Բառգիրք Նայոց»-ը իր դերն է ունեցել ՆԲ-ի ստեղծման ժամանակ, քանի որ համոզված ենք, որ Մխիթարյան հայրերը բավականին լավ ուսումնասիրել էին թե՛ ԲՆ-ն, թե՛ «Բառք քերթողականը»-ը: Բայց ՆԲ-ի առաջաբանում ԲՆ-ն կամ «Բառք քերթողականը»-ը օգտագործված աղբյուրների շարքում չեն հիշարակվածված, դրանց մասին չի խոսվում նաև առաջաբանի այլ մասերում, ինչպես նաև բուն բառահոդվածների բացատրության ժամանակ (կարծում ենք, որ այս ամենի հիմնավոր պարճառ կարող էր լինել Մխիթար Սեբաստացու վերապահ գնահատականը ԲՆ-ի նկատմամբ):

4 Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հայր. Ա, 1749, առաջաբան, էջ 4:

Երկու բառարանների համեմատության ժամանակ մի հեղաքրքիր իրողություն նկատվեցին: ՆՏԲ-ում կան մի քանի բառեր, որոնք չունեն բնագրային վկայություն, իսկ բացարձակապես չունեն, ինչպես վերը նշել էինք, երբեմն թերի են: Այդպիսի բառերը ունեն մեկ ընդհանրություն. բոլորի սկզբում գրված է «Ըստ հին բառ»: Բառարանի առաջաբանում այն բացատրված է այսպես. «**Նաւարումն բառից ի գրչագիր համառօտ բառագիրս**, գործ ԺԳ. եւ ԺԴ դարոց՝ ի գիրնոց եւ ի քաղաքաց կցկցեալ ի պէսպէս օրինակս այլեայլ օրինակաւ»⁵: Հեղաքրքիրն այն է, որ ԲՏ-ն եւ ՆՏԲ-ն բառահոգվածների փոխանկյունից քիչ ընդհանրություն ունեն, բայց այդ սակավ ընդհանրություն կազմող բառերի մեջ են մտնում հենց այն բառերը, որոնք «ՆՏԲ»-ում բացատրված են որպէս «հին բառ»: Այս հանգամանքը մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ ԲՏ-ն որպէս աղբյուր գործածվել է ՆՏԲ-ի կազմության ժամանակ: Նկատի ունենալով «ԺԳ. եւ ԺԴ դարեր» կապակցությունը, կարծում ենք, որ խոսքը ԲՏ-ի հիմքը կազմած «Բառք քերթողականը»-ի մասին է⁶: Ստորև ներկայացնենք մի աղյուսակ, որտեղ տրված են համապատասխան ձևերը երկու բառարաններում:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի»	«Բառգիրք Նայոց»
ԱՂԹ-ԱՄԱՆ. գ. Ըստ հին բռ. Ապարանջան:	ԱՂԹ-ԱՄԱՆ-Ապարանջան
ԱՄԱՐՈՒ. գ. Ըստ հին բռ. մեկնի, որոջ կամ ոչխար: Այն է ըստ ասորոց էմարու, այսինքն՝ էգ գառն, որոջ:	ԱՄԱՐՈՒ- որոջ կամ ոչխար
ԱԷՇԱԷՇԵԼ. Ըստ հին բռ. Կարկարել. թերևս Կցկցել: (Կամ ի Կես բառն:)	ԱԷՇԱԷՇԵԼ- կարկարել
ԱԳՈՐԱՆՔ.- գ. Մթերք աղբեաց. Նին բռ:	Ագորանք- մթերք աղբոյ

Այդպիսի բառեր են նաև՝ պախպոտ, պախեփ, պաշտակ եւ այլն :

Մեր կարծիքով, ՆՏԲ-ի հեղինակներն իրենց բառարանը կազմելիս որոշ բառեր ներմուծել են ԲՏ-ից: Այդ բառերի մեծ մասի աղբյուրներն ըստ ամենայնի վերջիններս կարողացել են ճշգրտել իրենց ձեռքի տակ եղած ձեռագիր մատյանների շնորհիվ:

Այս փոխանկյունից ուշագրավ է նաև երկու բառարանների ընդհանուր բառամթերքի քանակը, եւ ինչպիսի բառեր լինելը: Պարզելու համար կարարել ենք հետևյալ հաշվարկը. «Բառգիրք Նայոց»-ում յուրաքանչյուր գլխապատին հաջորդող 50 բառը համեմատել ենք ՆՏԲ-ից նույն սկզբունքով առանձնացված 50 բառի հետ եւ յուրաքանչյուր տառի դեպքում համընկնումը կազմել է մոտավորապես 5%: Այսպիսով՝ փաստում ենք, որ երկու բառարանների ընդհանուր բառերի թիվը բավական փոքր է, ինչը փաստում է տարբեր աղբյուրների առկայությունը:

5 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հայտ. Ա. Վանդիկ 1836, էջ 14:Ընդգծ. ԽՆ.:

6 «Բառք քերթողականը»-ը, ունեցել է բազմաթիվ ընդօրինակություններ: Այս դեպքում դժվար է պարզել, թե որ ձեռագիրն է եղել ՆՏԲ-ի հեղինակների ձեռքի տակ:

«Բառգիրք Նայոց»-ը համեմատել ենք նաև «Առձևոն բառարան»-ի հետ, և վիճակագրական գրեթե նույն պարկերն է ստացվել, թեև ինչպես գիրքն է «Առձևոն բառարանը» շուրջ 5000 բառով գերազանցում է ՆՏԲ-ն:

Նկարագրա շրջանի բառարաններում, «Բառգիրք Նայոց»-ի մասին այլևս հիշարարություն չկա: «Բառգիրք Նայոց»-ը դարձյալ հայտնվում է հայագետների ուշադրության կենտրոնում Ի դարասկզբին : Իր «Նայերեն արմարական բառարան» աշխարհության մեջ ԲՆ-ին է անդրադառնում Նր. Աճառյանը : Անվանի հայագետը նշում է, որ այն լի է սխալներով, որոնք թե՛ քառերի շփոթման և թե՛ կազմողի անփութության հետևանք են. «Մանրամասն քննելուց յետոյ աշխարհությունը, քրեսայ որ մեծագույն մասամբ վրիպակների հավաքածոյ է այն»⁷: Այնուամենայնիվ, Աճառյանն իր բառարանում ներառել է բավականին թվով բառեր ԲՆ-ից, որոնց մի մասը ճշգրտվել և հստակ ստուգաբանվել են, իսկ մյուս մասն էլ պարզապես անցկացված է բառարանի մեջ՝ որպես անհայտ ծագման բառեր: Ստորև ներկայացնում ենք մի քանի օրինակ:

ԱՐԲՈՒ «չորից» ունի միայն Բառ. Երեմ. էջ 3»: Այս դեպքում գիրքն է, որ ԲՆ-ն որևէ մարտնագրական վկայություն չունի, մինչդեռ Աճառյանը, նշելով, որ այս բառը հանդիպում է միայն Մեղրեցու բառարանում, պալիս է նաև վերջինիս գործածության օրինակը մարտնագրության մեջ :

ԱԳՈՒՌ «բուռ, ափ». գործածուած է մեկ անգամ Եզեկ. Ժ.2 (սխալ է մեկնում Բառ. երեմ. 5 «գոգ մարդոյ կամ աղաբողոն», որին հետևելով ՆՏԲ, ՋԲ և ՓԲ առեկացնում են նաև «գոգ մարդոյ կամ հանդերձի»):

Նույն ձևով նաև՝ **ԱՐԵՂԲԻ** «փութապես». գիրք միայն Բառ. երեմ.», **ԱԳՈՐԱՆՔ** «աղբի մթերք» Բառ. երեմ.», **ԱԳՈՒՆԻԱՅ** «ծածուկ». գիրք միայն Բառ. երեմ. և այլն :

Նկարագրա շրջանի բառարաններում, ինչպես նաև լեզվաբանական այլ ուսումնասիրություններում հայոց առաջին րպագիր բացարարական բառարանի վերաբերյալ առանձին հիշարարություններ չեն հանդիպում : Դա հասկանալի է, քանի որ լույս տեսնող բառարանների բառամթերքը վերաբերում էր արդի հայերեն բառերին և դրանց բացարարություններին: Թվում էր, թե ժամանակակից հայերենի բառարանները և ԲՆ-ն ընդհանուր որևէ բան չեն կարող ունենալ, եթե հաշվի առնենք նույնիսկ ՆՏԲ-ի և ԲՆ-ի սահմանափակ ընդհանրությունները: Մակայն ԲՆ-ի բառերի ուշադիր քննության արդյունքում դուրս բերվեցին մի շարք բառեր, որոնք չէին հանդիպում հետագա շրջանի և ոչ մի բառարանում, թեև այդ բառերի գոյությունը, թե՛ կազմության և թե՛ իմաստի քրեսանկյունից, ամբողջությամբ արդարացված է: Այդ բառերը համեմատել ենք հայերենի բացարարական բոլոր բառարանների հետ, և միայն Սր. Մալխասյանցի «Նայերեն բացարարական բառարան»-ում գտել որոշ ընդհանուր բառեր: Այսինքն՝ ԲՆ-ում ներառված են այնպիսի բառեր, որոնք հանդիպում են միայն նշված բառարանում: Պարբ է ասել, որ Մալխասյանցը իր բառարանի առաջաբանում բառարանի աղբյուրների մասին խոսելիս որևէ հիշարարություն չի անում Երեմիա Մեղրեցու բառարանի վերաբերյալ: Այդ բառերի թիվը սահմանափակ է, ուստի ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը համապարասխան աղյուսակով.

⁷ Ն.Աճառյան, Նայերեն արմարական բառարան, հար Ա., Երեան, 1971, էջ 9:

Գլխարառ	«Բառգիրք Նայոց»	«Արդի հայերեն բացարձակաբարան»
Էաբան	գոյարան	Էակարան
Էունակ	ինքնիշխան	Էութինն, գոյութին ունեցող
Ժահաշարժ	չարագործ	Ժահ՝ կեղտոտություններ շարժող, վատ ցանկություններ շարժող
Իսկօրեն	ճշմարտօրեն	իսկաբար, իսկապես
Կահամուր	եկամուր	իբրև կահ մարտ մեկի գոյթի մեջ, եկամուր
Նակարառել	հակագրել	մեկին կամ մի բանին հակառակ գրել

Նկարաբերքը է, որ Մալխասյանը այս բառերի դեպքում մարեմագրական վկայություններ գրեթե չի բերում, սակայն չենք կարող միանշանակ ասել, որ հեղինակը դրանք վերցրել է ԲՆ-ից, քանի որ ինչպես նշել էինք, Մալխասյանը ԲՆ-ի մասին որևէ հիշարարկում չի անում:

Բառարանի նկարմամբ հեղաբերությունն ավելի մեծացավ, երբ Մարեմագրանի գլխաշխարհը Ն.Ամալյանը հրապարակեց «Բառգիրք Նայոց»ի քննական բնագիրը⁸ : Այսպիսի հեղինակը հնարավորին չափ ճշտել է բոլոր տարբերությունները, համեմատել Մարեմագրանում պահվող մեծ թվով ձեռագրերի հետ, վերականգնել բազմաթիվ աղավաղումներ կամ բացարթել հնարավոր ձևերը: Քննական բնագիրն իսկապես մի նոր հնարավորություն տվեց բառարանագրությամբ զբաղվողներին:

Նոր շրջանի ստուգաբանական բառարաններում արդեն «Բառգիրք Նայոց»-ը հանդես է գալիս քննական բնագրի տեսքով: Այսպիսի մասնավորապես կարևորում ենք ակադեմիկոս Գ. Զահուկյանի «Նայերեն ստուգաբանական բառարան»-ը⁹: Ինչպես Աճառյանը, այնպես էլ Զահուկյանն իր ստուգաբանություններում հաճախ է անդրադառնում ԲՆ-ին՝ փորձելով բացարթել այս կամ այն բառի ծագումը, ստուգել վերջինիս ճիշտ կամ սխալ լինելը, վերականգնել աղավաղված ձևերը: Ստորև ներկայացնենք բազմաթիվ ձևերից մի քանի օրինակ, որոնցում Զահուկյանը փորձում է պարզել այդ բառերի կազմությունը կամ կապը մեկ այլ բառի հետ :

ԽՇԵԼ «դադար առնել (անկողնում) հանգստանալ» (ԲՆ) : Կապ ունի՝ արդյոք խիշտ «անկողին» բառի հետ:

ԽՇԽՇԵԼ «սփռվել, հոգալ» (ԲՆ): Թերևս բաղադրյալ կազմություն՝ խշ(ել) և խթել (խթիլ):


ԸՆԳՎԻԿԱՆԱԼ «հասկանալ» (ԲՆ): Կազմված է ընդ- նախածանցով՝ այլուստ անծանոթ վիճակով բայից (աղավաղված), որ, թերևս, կապ ունի ԲՆ-ի վիկող «նկարող» ձևի հետ և այլն :

⁸ Ն.Ամալյան, Բառգիրք Նայոց, Երևան, 1975.:

⁹ Գ. Զահուկյան, Նայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010:

Այսպիսով՝ րեւոմուն ենք, որ «Բառգիրք Նայոց»-ը ժամանակի ընթացքում ոչ միայն չի սպառնում իր նկարմամբ եղած հեղաբեքությունը, այլև շարունակել է մնալ հայագիտության և հայկապես բառարանագրության գրադավոյների ուշադրության կենտրոնում: Միանգամայն ընդունելի է Լ.Նովիանիսյանի այն նկարառումը, թե «Բառգիրք Նայոց»-ի արժեքը ժամանակին ճիշտ չի գնահատվել և այսօր կա շատ արժեքավոր նյութ¹⁰: Այդ արժեքավոր նյութի գիտակցմամբ էլ ձեռնամուխ ենք եղել սույն աշխատանքին:

Եթե փորձենք դիագրամայի լեզվով արտահայտել «Բառգիրք Նայոց»-ի դերը հայ բառարանագրության պարմության մեջ, ապա այն կստանա հետևյալ տեսքը՝



1. Նայկազեան բառարան (Մխիթար Սեբաստացի)
2. Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Մ. Ազեքեան, Խ. Միրմուկեան)
3. Առձեռն բառարան հայկազեան լեզուի (Մ. Ազեքեան)
4. Միջին հայերեն բառարան (Ռ. Ղազարյան, Ն. Ավերիսյան)
5. Նայերեն արմարական բառարան (Ն. Աճառյան)
6. Արդի հայերենի բացարձակ բառարան (Ստ. Մալխասեանց)
7. Նայերեն սրուգարանական բառարան (Գ. Զահուկյան)

¹⁰ Տե՛ս Լ.Նովիանիսյան, Գրաբարի բառարանագրության և բառագիտության հարցեր, Երևան 2009, էջ 72: